

**ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ**

ՀՀ բնապահպանության նախարարության Օզոնի ազգային կենտրոնը հայտարարում է «Պահպանենք օզոնային շերտը» թեմայով նկարչական մրցույթ 6-16 տարեկան երեխաների համար: Աշխատանքներն ընդունվում են մինչև ընթացիք տարվա մայիսի 20-ը՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային (JPEG, բարձր որակ) տարբերակներով: Մրցույթի արդյունքները կամփոփվեն ժյուրիի կողմից և հունիսի 5-ին՝ Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրը, կհայտարարվեն հաղթողները: Լավագույնը ճանաչված 3 աշխատանքներով կթողարկվեն փազլներ, իսկ մասնակից բոլոր երեխաների համար կկազմակերպվի շրջայց Բնության պետական թանգարում:

Բոլոր նրանք, ում հետքարքրեց մեր հայտարարությունը, կարող են կապ հաստատել Օզոնի ազգային կենտրոնի աշխատակիցների հետ մանրամասներին ծանոթանալու համար: Օզոնային շերտի մասին հանրամատչելի տեղեկատվություն կարող էք գտնել մեր կայքի *Հրապարակումներ* բաժնից: Աշխատանքները խնդրում ենք ներկայացնել հետևյալ հասցեներով՝

Փոստով ուղարկելու համար՝

Էլեկտրոնային հասցեին ուղարկելու համար՝

Բնապահպանության նախարարություն

ՀՀ, ք. Երևան-0010, Կառավարական շենք3,

Հանրապետության հրապարակ

info@armozone.am

